Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի «Հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը եվ նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 224-Ն որոշման 3-րդ հավելվածի 12-րդ կետի պահանջով և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Արդարադատության նախարարության՝ որպես իրավասու մարմնի համակարգման ոլորտում գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացման ընթացակարգը և մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը սահմանելու մասին» 654-Լ հրամանի հավելվածի 2-րդ կետով՝

Որոշում եմ

1. «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմինը ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին Ընկերության որոշման և մրցույթի պայմանների մասին 5-օրյա պարբերականությամբ առնվազն երկու անգամ հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական կամ տեղական ռադիո, հեռուստատեսություն, մամուլ):

Գործադիր մարմնի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը տեղադրվում է նաև Ընկերության և Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջերում:

Արդարադատության նախարար **ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ**

31 մայիսի 2023

քաղ. Երևան